

ԽՉ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Արմ.

3-4264a

ՐԱՀԱՆԳ

1935 ԹՎԻ ՀԱՅԱՎԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ
ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲԵՐԲԻ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԻՐ. № 15514



633
-25

ՅՈՒԳ ՀՐԱՏ-ՇԵՐԵՎԱՆ 1935

-25

09 SEP 2013

18 418

Apr.

04 AUG 2010

633

-25 ԳՐԱԶԱՆԳ

1935 թվի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆՍՏԱՆՏԻՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԻ ԿՐԱ
ԲԵՐՔԻ ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԲԵՐՔԻ ԶԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՆՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ


§ 1. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարները խորհրդի 1932 թվի
վորոշմամբ ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից կազմակերպված է հացաբույսերի
և արևածաղկի բերքատվությունը և արտադրանքը վորոշող
հանձնաժողով: Այդ հանձնաժողովի տեղական որգաններում
(բերքատվությունը վորոշող միջըջանային Պետ. Հանձնաժողով-
ներ) աշխատելու համար Համ. Կ. Կ. (բ) Կ. Կ. ուղղել է մի շարք
բարձրորակ ընկերների, վորոնք այդ աշխատանքի համար հան-
վել են չափազանց պատասխանատու պաշտոններից:

Իս ապացուցում է, թե կուսակցությունն ու կառավարու-
թյունը ինչպիսի խոշոր նշանակություն են տալիս բերքատվու-
թյան և արտադրանքի չափի ճիշտ վորոշման գործին: Բերքա-
տվության Պետական Հանձնաժողովներն իրենց գոյության յեր-
կու տարվա ընթացքում խոշոր աշխատանք են կատարել Պրո-
լետարական պետությանը խաբելու ձգտում ունեցող դասակար-
գային թշնամու փորձերի դեմ պայքարելու գործում, ձեռք բերե-
լով բերքատվության միանգամայն ճիշտ չափն արտահայտող
թվեր:

§ 2. Բերքատվության Պետ. Հանձնաժողովի աշխատանք-
ներին խոշոր չափով ոժանդակում են այն տվյալները, վորոնք
ցույց են տալիս, այսպես կոչված, «արմատի վրա» յեղած բերքի
չափը, վորը կարող է ստացվել հացաբույսերի բերքահավաքի
հենց սկզբին:

Արդեն մի քանի տարի յե, վոր խորհրդային վիճակագրու-
թյունն աշխատանք է տանում արմատի վրա բերքի որեկտիվ
չափման համար՝ այդ նպատակի համար ընտրված կոլխոզի հա-
ցաբույսի հասած արտի մի մասը հնձելու, կարսելու և կլեկու
միջոցով: Հասունացող բերքի վորոշման համար համաշխարհա-
յին վիճակագրությունը կիրառում է մրայն սուբեկտիվ մեթոդը,
աչքաչափի միջոցով, վորտեղ բերքի գնահատականը հիմնված է
անձնական տպավորության վրա: Միանգամայն հասկանալի յե,
վոր այդ ձեի գնահատումը չի կարող տալ բերքի ճիշտ չափը, և

26537



448. №

վոր այդպիսի գնահատականը կարելի չե աղավաղել յերբեմն վոչ զիտավորյալ, իսկ հաճախ՝ զիտավորյալ կերպով:

Խորհրդային վիճակագրությունը, այնուամենայնիվ, չի հրաժարվում բերքը սուբեկտիվ—աչքի չափով գնահատելու այդ մեթոդից: Մինչև բերքահավաքի սկսվելը բերքատվության վորոշումը մենք ընդհանրապես դեռևս կարող ենք կատարել միայն սուբեկտիվ միջոցով. բացի այդ, սուբեկտիվ տվյալներ կարելի չե ստանալ բոլոր կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններից, այլ վոչ միմիայն նրանց մի վորոշ մասից: Սակայն բերքի որեկտիվ վորոշումը արմատի վրա հնարավորությունն է տալիս ճիշտ չափման հիման վրա ստուգելու մասսայական սուբեկտիվ գնահատումները: Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների տված ցուցմունքների նկատմամբ նա հանդիսանում է վերահսկողության մի հղորդ գնիք, այդ պատճառով էլ խոշոր նշանակություն ունի:

§ 3. Բերքի որեկտիվ ճիշտ կատարված չափման յերկրորդ առաջնությունը կայանում է նրանում, վոր նա ցույց է տալիս այն բերքի լրիվ չափը, վորը հասել է և գտնվում է արմատի վրա: Մենք դեռևս չենք հասել այն վիճակին, վորպեսզի բերքն իր ամբողջությամբ, բացառությամբ միայն տեխնիկական անխուսափելի կորուստների, կարողանանք դաշտում հավաքել և լցնել կոլտնտեսության շտեմարանը: Բերքահավաքի ընթացքում հաճախ կորուստները մեծ չափերի յեն հասնում. բերքահավաքի ժամանակ կորուստներ տեղի յեն ունենում նաև հատիկների վոչ լրիվ կալման, նրանց հափշտակման և այլ հետևանքով: Բացի այդ, մուտք արված հացահատիկի քանակը, վորպիսին կարելի չե ստանալ բերքահավաքի վերջում կոլտնտեսության հաշվետվությունից, հաճախ իրական ստացվածից ավելի պակաս է լինում. կոլտնտեսությունները հաճախ դաշտում կամ կալում անասունները կերակրում են հացահատիկով, վորպիսին չեն մտցնում հաշվառման փաստաթղթի մեջ, հանրային սննդի համար առանց հաշվի բաց են թողնում հացահատիկ և այլն: Այդպիսի անհաշիվ ծախսման (разбазаривание) դեմ պայքարելու համար չափազանց կարևոր է իմանալ հասած բերքի ճիշտ չափը, վոր գտնելվում է դաշտում:

Արմատի վրա բերքի վորոշիլը հենց բերքահավաքի սկզբին տալիս է հացահատիկի այն ճիշտ չափը, վորը կոլտնտեսությունը կարող է ստանալ, յեթե նա լավ հավաքի և կալի հատիկը.

դա կոգնի կոլտնտեսությունը պայքարելու հասարակական հացահատիկի անհաշիվ ծախսման և ամեն տեսակ չարաշահությունների դեմ:

Այդ պատճառով արմատի վրա բերքի վորոշիլը ուժեղ գեղք է հանդիսանում կոլտնտեսությունում կորուստների, վասնումների ու հափշտակումների դեմ պայքարելու և խելացի կերպով բերքն ոգտագործելու, հետևապես և կոլտնտեսականների ունեվորությունը բարձրացնելու համար: Արմատի վրա բերքի չափումն անցկացնող յուրաքանչյուր աշխատող պետք է կոլտնտեսականներին ծանոթացնի ինչպես աշխատանքի խնդիրների (մինչև նրանց կատարելը), այնպես էլ նրանց արդյունքների (կատարումից հետո) հետ և պարզ կերպով բացատրի նրանց, վոր այդ աշխատանքի ճիշտ կատարումը կարևոր է ինչպես պետության, այնպես էլ իրեն՝ կոլտնտեսության ու նրա բոլոր անդամներին շահերի տեսակետից:

§ 4. Ինչպես կարելի չե կոլտնտեսության բերքը չափել արմատի վրա, առանց կորուստների: Այդ նպատակի համար ոգտվում են չափում կատարելու ընտրական միջոցով, վորը յեթե ճիշտ է կադակերպված ու խնամքով կատարված, տալիս է միանգամայն ճշգրիտ արդյունք: Այն կոլտնտեսությունում, վորտեղ բերքը չափվելու չե հնձի հենց սկզբին, արտում իրարից հավասար հեռավորության վրա գնում են «մետրովկաներ» (մետրովկան փայտյա շրջանակ է, վորի յուրաքանչյուր կողմը հավասար է ուղիղ 100 սանտ.): Շրջանակի մեջ ընկած հասկերը խնամքով կտրվում և դարսվում են պարկի մեջ: Այսպիսի մետրովկաներ պետք է անցկացնել բավականին շատ (200—400), վորպեսզի ստացվի տվյալ հոլամասի ամբողջ բերքի պատկերը: Այնուհետև կտրված հասկերը խնամքով ձեռնում ու կշռում են ստացված հատիկը: Ստացված հատիկի քաշը բաժանելով վերցրած նմուշների (մետրովկաների) ընդհանուր թվի վրա, կտանանք մեկ քառակուսի մետրի հատիկների միջին քաշը, վորի հիման վրա կարելի չե վորոշել մեկ հեկտարից ստացվող բերքի միջին չափը:

§ 5. Վորպեսզի իսկապես ճիշտ արդյունք ստացվի, պետք է ամբողջ աշխատանքը կատարել մեծ խնամքով, պահպանելով հետևյալ կանոնները.

ա) Յուրաքանչյուր կոլտնտեսությունում վերցվող նմուշների քանակը պետք է լինի ճիշտ այնքան, վորքան նախատես-

ված և սույն հրահանգի § 7-ում, յերբեք թույլ չտալով նմուշները և անակի պահպանելու: § 7-ում ցույց տված նմուշները քանակը հնարավորութունն է տալիս չափազանց ճիշտ վորողելու ամբողջ անտեսութան տվյալ հացարույսի բերքի միջին չափը: Նմուշները քանակը վորողելիս ինկատի յե առնվում նախ՝ չափման յինթակա ցանքի տարածութունը և յերկրորդ՝ տվյալ շրջանի բերքի խայտաբղետութունը, ըստ վորում հատուկ նշանակութուն ունի բերքի խայտաբղետութունը. խայտաբղետ բերքը պահանջում է անպայման վերցնել ավելի մեծ թվով նմուշներ:

բ) Մետրովկաներ դնելիս վոչ մի դեպքում չպետք է ընտրել նախորդված տեղ, այլապես՝ ընտրելով ցանքի ամենալավ կամ ամենավատ տեղերը, կարելի յե ստանալ իրական բերքից ավելի բարձր կամ ցածր բերք:

գ) Պետք է կտրել միայն այն հասկերը, վորոնց արմատները գտնվում են շրջանակի մեջ, չվերցնելով շրջանակից դուրս բուսած հասկերը: Հասկերը պետք է կտրել մաքուր, մետրովկայի մեջ չթողնելով վոչ մի հասկ: Բույսերը պետք է կտրել արմատից մտտիկ:

դ) Մետրովկաների կտրելը պետք է սկսել միայն այն ժամանակ, յերբ արտը հասել է. վոչ մի դեպքում չի թույլատրվում նմուշներ վերցնել, յերբ հասկերը դեռևս կանաչ են:

ե) Բոլոր կտրած հասկերը պետք է խնամքով ձեռնել, այնպես վոր, վոչ մի կորուստ տեղի չունենա վոչ հասկերը կտրելու և վոչ ել ձեռնելու ժամանակ:

§ 6. Յեթե աշխատանքի ժամանակ ճշտությամբ չկիրառվեն այս ցույց տրված հիմնական կանոնները, ստացված արդյունքը կարող է խիստ կերպով տարբերվել կոլտնտեսության իրական միջին չափից և այդպիսով աշխատանքն ամբողջությամբ կվիժի:

Ստորև տալիս ենք մանրամասն տեխնիկական և կազմակերպչական ցուցմունքներ, վորոնց կատարումը պարտադիր է արմատի վրա բերքի չափումներ կատարող ամեն մի աշխատողի համար:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՅՈՒՅՄՂԻՆՔՆԵՐ «ԱՐՄԱՏԻ ՎՐԱ» ԲԵՐՔԻ ԶՈՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

§ 7. Բերքի չափումն անցկացվող կոլտնտեսութունում յուրաքանչյուր կուլտուրայի համար նմուշները (մետրովկաների) քանակը պետք է սահմանել համաձայն հետևյալ աղյուսակի՝

Յեթե կոլտնտեսության չափող կուլտուրայի տարածութունը կազմում է	Կոլտնտեսութունում յուրաքանչյուր կուլտուրայի համար սահմանվում է հետևյալ քանակությամբ նմուշ—(մետրովկաներ)	
	1 խ ու մ բ	2 խ ու մ բ
Բերքի քիչ խայտաբղետություն ունեցող շրջանների համար	Բերքի եխտ խայտաբղետություն ունեցող շրջանների համար	
Մինչև 30 հեկտ.	200 մետրովկա	300 մետրովկա
— 9 100 հեկտ.	300 —>—	400 —>—
« 100 հեկտ. ավելի	400 —>—	500 —>—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Ժող. Տնտ. Հաշ. վարչութունը յուրաքանչյուր շրջան դասում է 1-ին կամ 2-րդ խմբին՝ համաձայն տվյալ շրջանի կոլտնտեսութունների բերքի խայտաբղետության և այդ մասին հատուկ ցուցմունք է տալիս յուրաքանչյուր շրջ. տեսչի:

2. Նմուշների քանակը սահմանվում է, յերևելով կուլտնտեսության տվյալ կուլտուրայի ցանքի ընդհանուր տարածությունից:


3. Սույն պարագրաֆում սահմանված նմուշների քանակը չի թույլատրվում պակասեցնել:

§ 8. Մետրովկաներ պետք է վերցնել անպայման յուրաքանչյուր կուլտուրայի ամբողջ հնձվող տարածութունից, ըստ վորում աշնանացանը պետք է վերցնել 1934 թ. աշնան ցանվածները, դուրս գալով այն տարածութունները, վորոնք փչացած են ցանքան ավարտելու մոմենտին. փչացած տարածության տվյալները պետք է վերցնել կոլտնտեսության № 4 ձևից:

§ 9. Յեթե տվյալ կոլտնտեսութունում ամբողջ ամառվա ընթացքում (այսինքն՝ գարնանացանի վերջում) մինչև բերքահավաքի սկիզբը ցանքերի տարածության մի մասը փրատվել է բնական պատահարներից (կարկուտ, ցրտահարութուն և այլն)

այն չափով, վոր տվյալ տարածությունից հացահատիկ բուրրովին չի ստացվի, այլ հնձվելու յե վորպես խոտ (վորն անպայման վավերացված պետք է լինի համապատասխան արձանագրությամբ), այդ դեպքում փչացած տարածությունից մետրովկա չպետք է վերցնել: Փչացածի մասին կազմած արձանագրության պատճենը պետք է կցել հարցաթերթին:

§ 10. Մեկ քառակուսի մետր տարածությունը պետք է վերցնել «մետրովկայի» միջոցով: Մետրովկան քառակուսի շորջանակ է, վորը շինված է փայտյա ձողերից, վորի յերեք կողմերն ամուր միացած են յերկաթյա անկյուններով, իսկ չորրորդ կողմը բաց է և ծածկվում է այն ժամանակ, յերբ մետրովկան դրված է լինում ցանքի վրա. այդ նպատակի համար շրջանակի ազատ կողմերի ծայրերի մոտ կտրվածքներ կան՝ 4-րդ կողմը դնելու համար (տես նկ. 1.)



Նկ. 1. Մետրովկա

Մետրովկայի կողմերը ներսի կողմից անպայման հավասար պետք է լինեն մեկական մետրի (100 սանտ.): Մետրովկան հարմար կերպով ցանքի վրա դնելու համար նրա ազատ ծայրերը թեք կտրվածք ունեն, վորոնց թեքությունը պետք է լինի դրսի կողմից, այլապես մետրովկան կբռնի մեկ քառակուսի մետր տարածությունից պիսի:

§ 11. Մետրովկան ցանքի վրա դնում են իրարից հավասար հեռավորության վրա: Յերկու նմուշների (մետրովկանների) միջև յեղած հեռավորությունը (ինտերվալը) կախված է կուլտուրայի յառաջիկա չափման յենթակա կուլտուրայի տարածությունից և

վերցվող նմուշների քանակից, վորը վորոշվում է այս հրահանքին կցված տախտակի համաձայն (տես յերես 23):

§ 12. Շրջանային տեսուչն այդ տախտակի համաձայն վորոշում է տվյալ կուլտուրայի չափով կուլտուրայի համար վերցվող ինտերվալը և հայտնում է մետրովկա անցկացնող անձնավորությանը՝ թե նմուշների միջև քանի մետր տարածություն պետք է թողնել: Որինակ, յեթե կուլտուրայի չափման յենթակա աշխարհ ցորենի տարածությունը 200 հեկտար է, իսկ նույն այդ կուլտուրայի համար ընդունված մետրովկանների քանակը 400 է, այդ դեպքում ինտերվալը կլինի 55 մետր:

Բոլոր առանձին հողամասերի համար ել ինտերվալի մեծությունը շարունակ մնում է միևնույնը (նաև այն դեպքում, յեթե չափման յենթակա կուլտուրան գտնվում է մի քանի հողամասերի վրա): Յուրաքանչյուր հողամասին ընկնող մետրովկանների նմուշների քանակն այդ դեպքում շարունակ պրոպորցիոնալ հարաբերության մեջ կլինի հողամասի հեկտարների թվին (այսինքն յեթե մի հողամասի տարածությունը յերկու անգամ մեծ է մյուս հողամասից, հետևապես այդ հողամասից վերցվող մետրովկանների քանակը ևս յերկու անգամ շատ կլինի մյուսից):


§ 13. Ժ.Տ.Ն.Վ. շրջանային տեսուչը մինչև չափումների սկսելը հայտնում է յուրաքանչյուր կուլտուրայի յուրումը բերքի չափումների անցկացնող լիազորին՝ թե յուրաքանչյուր կուլտուրայի համար վորքան մետրովկա պետք է վերցնել և մետրովկանների համար ինչպիսի ինտերվալ է սահմանվում:

§ 14. Մետրովկաններով նմուշները պետք է սկսել վերցնել տվյալ հողամասի հացարույսի հասած ժամանակ. վոր մի դեպքում չի թույլատրվում կտրել չհասած հասկերը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նմուշների վերցնելն սկսել հնձի նախորդակին, ըստ վորում նմուշները պետք է վերցնել վոր թե ամբողջ տարածության վրա միանգամից, այլ այն հողամասերից, վորոնք մի որ հետո պետք է հնձվեն: Այսպիսով, յեթե կուլտուրայի յուրումը վաղը պետք է հնձի արտի այն մասը, վորն արդեն հասել է, ապա այստեղ (մի որ առաջ) հարկավոր է այդ մասում դնել մետրովկանները, իսկ յեթե արտի մնացած մասերում հասկերը դեռևս չեն հասել և պետք է հնձվի մի քանի որից հետո, այդ հողամասում մետրովկանների դնելը պետք է հետաձգել այն հաշվով, վոր նա կատարվի հնձի նախորդակին: Հակառակ դեպքում

նմուշներն մեջ կընկնեն չհասած հասկեր, վորը կպակասեցն իրական բերքը:

Յեթե կոլտնտեսությունը հացահատիկի հունձը այս կամ այն հողամասերում ուշացնում է, այդ դեռ չի նշանակում, վոր հետաձգել պետք է նաև մետրոկաներ դնելը: Այդ դեպքում նմուշները պետք է վերցնել իր ժամանակին, արտի հասած որը, անկախ նրանից թե կոլտնտեսությունը յերբ կսկսի հունձը

§ 15. Վորպեսզի կոլտնտեսության չափման յենթակա կուլտուրայի ամբողջ տարածության վրա համահավասար չափո գրվեն մետրոկաները, աշխատանքները պետք է տանել հետևյա ձևով՝ պետք է ընտրել հողամասի վորևե անկյուն (որ. անկյուն. Ա. տես նկ. 2).



Նկ. 2. Մետրոկաների դասավորումը ցանքի վրա

□ Մետրոկաներ
● Չողեր

Այդ ընտրված անկյունից, հողամասի ամբողջ յերկարությամբ սահմանված ինտերվալների վրա պետք է դնել ձողեր: Հողամասի հակառակ կողմում նույն հեռավորությունների վրա նույնպես ձողեր պետք է դնել:

Առաջին ձողը պետք է դնել հողամասի անկյունից հաշված մեկ ինտերվալ հեռավորության վրա (ինչպես ցույց է աված նկ. 2-ում) այնպես, վոր մետրոկաների առաջին շարքը չընկնի հողամասի սահմանի վրա:

Ծանոթություն.—Նախորոք կարելի յե և ձողեր չդնել, այլ նմուշներ վերցնելու ժամանակ հողամասի 2 հակառակ կողմերով գնում են մեկ-մեկ հողի, վորոնք սահմանված հեռավորություններից (ինտերվալներից) շարժական ձողերի միջոցով ցույց են տալիս ուղղությունը:

§ 16. Հասկերի կտրելը: Առաջին ձողի մոտ, ցանքի վրա դրնում են մետրոկան, խնամքով ուղղում այն բույսերը, վորոնց արմատները գտնվում են շրջանակի մեջ և հասկերն ամբողջությամբ կտրում, իսկ, ընդհակառակը, այն հասկերը, վորոնց արմատները գտնվում են շրջանակից դուրս և պատահաբար ընկել են շրջանակի մեջ—հեռացնում են: Հեռացնում են նաև այն հասկերը, վորոնց արմատները գտնվում են շրջանակի փայտի տակ: Պետք է նկատի ունենալ, վոր յեթե ամեն մի մետրոկայում 1—2 հասկ պակաս, կամ, ընդհակառակը, 1—2 հասկ ավել է կտրված, այն ժամանակ մեկ հեկտարում մենք կունենանք մինչև 10 կիլոգրամի սխալ: Հասկերը պետք է կտրել անպայման արժատի մոտից (ձողտի հետ միասին):

§ 17. Ամենից հարժար է բույսերը կտրել մանգաղով, բայց կարելի յե նաև՝ վոչխար խուզելու միջոցով:

§ 18. Մետրոկայի միջի կտրած հասկերը թոկով կամ ծղտով պետք է կապել խրձիկներ, վորը հնարավորություն կտա հաշվելու վերջրած մետրոկաները և հեշտացնելու հավաքած հասկերի ծեծելը:

Խրձիկները պետք է դարսել պարի մեջ հասկերը դեպի ցած, վորպեսզի հասկերի և հատիկների կորուստ տեղի չունենա:


§ 19. Մետրոկան վերևից դնելը չափազանց ղժվար է և նույնիսկ անհնարին, մանավանդ յերբ բույսերը բարձր են, խիտ ու խճճված, այդ պատճառով մետրոկան անպայման իր բաց կողմով պետք է մտցնել ցածից, արմատների արանքով (այդ նպատակով ել մետրոկան պատրաստված է Ս տառի ձևով: Շարքացանի դեպքում մետրոկան պետք է դնել այնպես, ինչպես ցույց է աված նկ. 3-ում, այնպես, վոր մետրոկայի կողմերը չընկնեն ցանքի շարքերի ուղղությամբ, այլ պես մետրոկայի մեջ կարող է ընկնել մի ավելորդ շարք:

§ 20. Առաջին մետրոկան դնելուց և նմուշը վերցնելուց հետո, պետք է մտնել ցանքի մեջ, շարժվելով ձողի հակառակ ուղղությամբ: Թոկով կամ քայլերով պետք է չափել սահմանված ինտերվալը և հենց վոտքերի մոտ, առանց նախապես ընտրելու

տեղը, ցանքի վրա դնում են մետրովկան, դարձյալ կտրում հաս-
կերը, պահպանելով վերը հիշված բոլոր կանոնները, կապում
խրճիկ և դնում միևնույն պարկի մեջ ու շարունակում շարժվելը
դեպի հողամասի հակառակ կողմը:

Սահմանված ինտերվալի վրա նորից դնում են մետրովկա,
խրճիկներ կապում, դնում միևնույն պարկի մեջ և այլն:

Այդ շաբաթի վերջին նմուշը, մինչև հակառակ կողմին հասնե-
լը, հաճախ կարող է ավելի մոտ լինել ձողին, քան սահմանված-



Նկ. 3. Ինչպես պետք դնել մետրովկան շաբաթանի գեպում

ինտերվալն է (որինակ սահմանված 30 մետր ինտերվալի փոխա-
րեն մինչև ձողը կմնա միայն 20 մետր). այդ դեպքում, վորպեսզի
ավելորդ նմուշ չվերցվի, ինտերվալի հասցած մասը պետք է
հաշվել հետևյալ շաբաթում ու դնել մետրովկան. այսպես՝ յերբ
մետրովկա դնողը դուրս է գալիս հողամասի հակառակ կողմից ձո-
ղի մոտ, այդտեղից շարժվում է հետևյալ ձողի ուղղությամբ
և հասնելով ձողին, նա մտնում է ցանքի մեջ ու շարժվելով հա-
կառակ կողմի ուղղությամբ, դնում է այդ շաբաթի առաջին մետ-

րովկան արդեն վոչ թե ձողից 30 մետր հեռավորությամբ, այլ
միայն 10 մետր հեռավորության վրա, լրացնելով նախորդ ին-
տերվալի պահասորդը:

Ընդհանրապես պետք է իմանալ, վոր մետրովկա դնողը դաշ-
տում ոճապատույտ ձևով շարժվելիս, անպայման պետք է պահպա-
նի միևնույն ինտերվալը, անկախ նրանից, թե ինչ տարածու-
թյուն կմնա վերջին մետրովկայից մինչև ցանքի մոտակա սահ-
մանը (տես նկ. 2):


§ 21. Ինտերվալները չափելու համար կարելի չե հանձնա-
րարել հետևյալ միջոցը, պատրաստել փայտի հասարակ ճախարակ
այնպիսի մեծությամբ, վոր նրա վրա կարելի լինի փաթաթել
սահմանված ինտերվալի յերկարության թուղը: Այդ թուղի մի
ծայրը ամրացվում է ճախարակին, իսկ մյուս ծայրը՝ փոքրիկ
փայտի (մոտ ¹/₂ մետր). ճախարակն ազատ պտտվելու համար
նրա միջով անց են կացնում փայտյա ձող: Մետրովկա դնողը
նրա միջով անց են կացնում փայտյա ձողը, վորը կապված է փայտից,
ձեռին ունենալով թուղի այն ծայրը, վորը կապված է փայտից,
մտնում է ցանքի մեջ, քաշելով իր հետ թուղը, վորը փաթաթված
մտնում է ցանքի մեջ, քաշելով իր հետ թուղը, վորը փաթաթված
է ճախարակի վրա և գտնվում է իր ոգնականի ձեռքին: Յերբ ճա-
խարակի վրա և գտնվում է իր ոգնականի ձեռքին: Յերբ ճա-
խարակի վրա փաթաթված ամբողջ թուղը բացվում է, մետրովկա
դնողը կանգ է առնում և թուղի ծայրին կապած փայտը խրում է
հողի մեջ և հենց այդտեղ ել դնում է մետրովկան: Մինչև նա
կկտրի մետրովկայի հասկերը, իր ոգնականը ճախարակի վրա
փաթաթելով թուղը, մոտենում է մետրովկայի դրած տեղը: Այնու-
հետև մետրովկա դնողը դարձյալ նույն ձևով առաջ է շարժվում
ու դնում հետևյալ մետրովկան:

§ 22. Յեթե ցանքի վրա մետրովկայի ընկած տեղը հասկեր
բոլորովին չկան (որինակ՝ մետրովկան ընկել է այնպիսի տեղ,
վորտեղ սերմ չի ընկել, կամ վորտե պատճառով հասկերը փչացել
են), այդ դեպքում այդ մետրովկան պետք է մտնի վերցվող
նմուշների ընդհանուր քանակի մեջ:

§ 23. Յեթե դաշտում գտնվում է փոս, ճահճ, թփուտ, միջ-
նակներ և կամ դաշտի միջով անցնում է ճանապարհ, այդ դեպ-
քում վարվում են հետևյալ կերպ. հաշվում են մետրովկայից
մինչև փոսի, ճահճի, թփուտի կամ ճանապարհի սահմանը, այնու-
հետև դուրս են գալիս դրանց տարածությունը և ապա շարունա-
կում լրացնել ինտերվալը փոսի, ճահճի, թփուտի կամ ճանա-
պարհի մյուս կողմից մինչև հետևյալ մետրովկան ու շարունակում
շարժվել ձողի ուղղությամբ:

§ 24. Յեթն հողամասն անկանոն ձև ունի (ծուռ ու մուռ սահմաններ), պետք է վարվել հետևյալ կերպ. դաշտի վորև անկյունից պետք է անցկացնել ուղիղ գիծ, վորի յերկարությամբ դնել ձողեր. իհարկե, այդ գիծը հողամասերի սահմանների վրայով չի անցնի: Հակառակ կողմում նույնպես վորև անկյունից պետք է անցկացնել ձողերի համար յերկրորդ գիծը (տես նկ. 4):

Մետրովկաները պետք է դնել այն կարգով, ինչպես արդեն վերն ասվել է, միայն այն տարբերությամբ, վոր հողամասի վերջում ինտերվալը պետք է հաշվել վոչ թե մինչև ձողը, այլ մինչև այնտեղ, վորտեղ ցանքը վերջանում է. այնուհետև պետք է շարունակել լրացնել ինտերվալը, սկսելով վոչ թե ձողից, այլ դարձյալ հողամասի ցանքի սահմանից:



Նկ. 4. Մետրովկաների դասավորումը անկանոն ձև ունեցող հողամասի վրա

§ 25. Յեթն չափվող կուլտուրայի ցանքը դտնվում է մի քանի հողամասերում, այդ դեպքում բոլոր հողամասերը պետք է ընդունել վորպես մեկ մասսիվ և առաջին հողամասի վերջին ձողից մինչև հողամասի սահմանը յեղած ինտերվալի մնացորդը պետք է փոխադրել հետևյալ հողամասը (տես նկ. 5):


§ 26. Յերբեք չի թույլատրվում մետրովկաների հավաքած հասկերը յերկար ժամանակ թողնել պարկերի մեջ, վորովհետև կարող է հատիկը տաքանալ և փչանալ:

§ 27. Ծեծելուց առաջ հասկերը պետք է չորացնել արևի տակ և անպայման վորև սփռոցի վրա (բրեզներտ, խսիր և այլն): Անձրև յեղանակին կարելի չէ չորացնել նաև փակ, ոդափոխվող շենքում, փռելով հասկերը բարակ շերտով:

§ 28. Չորացած հասկերը պետք է խնամքով ձեծել: Ծեծել կա-

րելի յե փայտերով, քթոցների վրա և անպայման սփռոցի (բրեզներտ, փալասի) վրա կամ պարկերում: Կալսիչ մեքենայով կամ կամերով չի թույլատրվում կալսել: Պետք է հետևել, վոր անպայման բոլոր հասկերը մաքուր ձեծված լինեն և վոչ մի հատիկ չըկորչի:

Ծեծելուց հետո բոլոր հասկերը պետք է ստուգել և նրանցում մնացած հատիկները ձեռքով մաքրել: Ծեծված ծղոտը պետք



Նկ. 5. Մետրովկաների դասավորումը, յեր ցանքը գանվում է մի քանի հողամասերի վրա:

և պահել մինչև աշխատանքների վերջը և հանձնել շրջանային տեսչին, վորն ստուգելու յե կատարված աշխատանքի վորակը:

§ 29. Ծեծված հատիկը պետք է մաքրել քամու միջոցով կամ քամհար մեքենայով. վերջին դեպքում քամհար մեքենայի տակ պետք է սփռոց փռել, տականքը մի քանի անգամ մաքրել, վորպեսզի նրա մեջ վոչ մի հատիկ չմնա:

§ 30. Ստացված ամբողջ հատիկը (վորի մեջ մտնում է նաև

կուտը) պետք է կշռել մինչև 10 գրամ ճշտությամբ և արդյունքը գրել արժատի վրա բերքի չափման հարցաթերթի վրա մեջ:

Մտնորոշումը.—Հատիկը պետք է կշռել առանց պարկի և անպայման ճիշտ ավսեակոր կշռքով: Չի թույլատրվում կշռել տասնորդական կշռքով և բեղմնով:

§ 31. Հացահատիկը կշռելու ժամանակ պետք է մոտավորապես վորոշել հատիկի խոնավությունը, վորը բնորոշվում է հետևյալ բառերով՝ «չոր», «միջին չորություն», «խոնավ» և «թաց»:

Հատիկի խոնավության և բնաքաշի ճիշտ վորոշման համար, բուրբ մետրոլիաներից ստացված հատիկը կշռելուց հետո, լավ խառնել, վերցնել նմուշ և լցնել շշի մեջ, ամուր խցանել բերանը և ուղարկել ԺՏՀՎ շրջանային տեսչին:

§ 32. Մետրոլիաներից ստացված հատիկի քանակը վորոշելու համար ամբողջ աշխատանքների ժամանակ պետք է ուշադրությամբ հետևել, վորպեսզի հատիկի վոշ մի կորուստ և հափըշտակում տեղի չունենա:

3. ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Ա. ՑՈՒՑՄԱՐՈՒՄՆԵՐ ԼԻԱՁՈՐԻ ՀԱՄԱՐ

§ 33. Կոլտնտեսության յուրաքանչյուր չափման յենթակո կուլտուրայի համար չափումներ կատարող լիազորը պարտավոր է լրացնել 1935 թ. արժատի վրա բերքի չափման հատուկ հարցաթերթի վրա (4 որինակից): Հարցաթերթն ստորագրում են լիազորը և կոլտնտեսության նախագահը:

Բերքի չափում կատարող լիազորը ԺՏՀՎ շրջանային տեսչից ստանում է անհրաժեշտ քանակի հարցաթերթի ձևեր, վորոնցում մինչև աշխատանքն սկսելը շրջանային տեսուչը լրացրած պետք է լինի 1, 2, 3, 6 և 7 կետերը: Չափումները վերջացնելուց հետո շրջանային տեսուչը լրացնում է նույնպես 18—23 կետերը: 17-րդ կետը լրացնում է կոլտնտեսության նախագահը: Հարցաթերթի մնացած բաժինները լրացնում է լիազորը:

§ 34. Հարցաթերթի 4 կետում գրվելու յե այն տարածությունը, վորտեղից փաստորեն վերցրած են նմուշներ, յեթե պարզվի, վոր 4-րդ կետում ցույց տված տարածությունը չի համապատասխանում ցանքի ընդհանուր տարածությանը (կետ 3), այդ դեպքում 5-րդ կետում մանրամասն պետք է բացատրել տարբերության պատճառը (որինակ՝ ամբողջ ցանքը 100 հեկտար է, իսկ մետրոլիաներ վերցված են 90 հեկտարից: Այն ժամանակ

5 կետում կարելի յե գրել, որինակի համար, վոր կոլտնտեսությունը 7 հեկտ. հսձել է մինչև մետրոլիաներ դնելը, իսկ 3 հեկտ. ամբողջությամբ կարկտահարված է և այդտեղից բերք չի ստացվելու, վորի մասին կցվում է հատուկ արձանագրություն): Յեթե 3 և 4 կետերի թվերը տարբերվում են միմյանցից և 5 կետում բացակայում է բացատրությունը, հարցաթերթը հետ կվերադարձվի:

§ 35. 8-րդ կետում ցույց է տրվելու փաստորեն վերցրած նմուշների քանակը, նրա մեջ մտցնելով նաև այն մետրոլիաները, վորոնցում հասկեր չեն յեղել:

Յեթե հողամասի չափազանց անկանոն ձևի կամ ինտերվալի վոչ ճիշտ վերցնելու հետևանքով փաստորեն վերցրած մետրոլիաների քանակը սահմանված քանակից վորոշ չափով պակաս կամ ավել լինի, ապա վոչ մի դեպքում չպետք է աշխատել մետրոլիաների քանակը հասցնել պլանով սահմանվածին:

§ 36. 10-րդ կետում ցույց է տրվելու բուրբ մետրոլիաներից ստացած հատիկի քաշը կիլոգրամներով և գրամներով (որ. 25 կիլ. 850 գր.):

§ 37. Բուրբ մետրոլիաներից ստացած հատիկի քաշը (կետ 10) բաժանելով մետրոլիաների ընդհանուր քանակի վրա (կետ 8) կստացվի հատիկների միջին քաշը մեկ մետրոլիայից (որինակ՝ 25 կիլ. 850 գր.: 200=129 գր.): Ստացած թիվը մինչև մեկ գրամ ճշտությամբ գրվելու յե 11-րդ կետում:


§ 38. Վորպեսզի ստանանք մեկ հեկտարի միջին բերքը արժատի վրա—ցենտներով, պետք է մեկ մետրոլիայից ստացած հատիկների միջին քաշը—գրամներով (կետ 11) բաժանել 10-ի վրա:

Որինակ՝ յեթե մեկ մետրոլիայի միջին բերքը 129 գրամ է, մեկ հեկտարի բերքը արժատի վրա կլինի 129 : 10 = 12, 9 ցենտներ (այդ թիվը գրվելու յե 12-րդ կետում):

§ 39. Հատիկի կշռելու ժամանակ վորոշվելու յե նրա խոնավությունը (տես § 31), վորը բնորոշվում է՝ «չոր», «միջին չորություն», «խոնավ» և «թաց» բառերով, վոր և նշվելու յե հարցաթերթի 13 կետում՝ ընդգծելով:

§ 40. Չափումներն ավարտելուց հետո ստացած արդյունքները հայտնվելու յեն կոլտնտեսության նախագահին:

17-րդ կետում կոլտնտեսության նախագահը գրելու յե այն մասին՝ թե համաձայն է արդյոք չափման միջոցով ստացված բերքի չափի հետ, թե վոչ, յեթե համաձայն չէ, ապա նշելու պատճառը:



264-87

բերքի գնահատականը, թե իր կարծիքով Լինչպիսի բերք է (1 հեկտարից) սպասվում չափված տարածութունից:

§ 41. Յեթե կոլտնտեսութան նախագահի բերքի գնահատականը չափումից հետո խիստ տարբերվի չափման տվյալներից, ապա կոլտնտեսութան նախագահը պետք է մատնանշի, թե ինչով է բացատրվում այդ տարբերությունը:

ԺՏՀՎ շրջանային տեսուչն ստանալով այդպիսի հարցաթերթը, վորտեղ խիստ տարբերություն կա չափման և կոլտնտեսութան նախագահի բերքի չափերի մեջ, պարտավոր է անմիջապես մեկնել այդ կոլտնտեսութունը՝ տեղում պարզելու տարբերության պատճառները և կազմելու արձանագրություն, վորը պետք է կցվի հարցաթերթի բոլոր օրինակներին:

§ 42. Հենց վոր մի կուլտուրայի չափման աշխատանքներն ավարտվեն, հարցաթերթերը պետք է ուղարկվեն ԺՏՀՎ շրջանային տեսչին, չսպասելով մյուս կուլտուրայի չափումները վերջացնելուն:

§ 43. Նկատի ունենալով, վոր ստացված նյութերը մշակվելու յեն մեքենացված միջոցով, անհրաժեշտ է, վոր բոլոր ցուցանիշները գրվեն հարցաթերթում բոլոր կետերի համար հատկացրած հատուկ շրջանակների մեջ:

ՀՐԱՀԱՆԳՉՈՒԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆԻՏԵՐ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱՅԻ ԲԱԺՆԻ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

§ 44. Ագրոտեխնիկայի բաժնին վերաբերող տեղեկությունները պետք է վերցնել կոլտնտեսութան գրասենյակում և ստուգվեն բրիգադավարների միջոցով: Արոտեխնիկայի մասին տվյալներն անպայման պետք է գրվեն «պատասխաններ»-ի սյունյակում:

§ 45. Ագրոտեխնիկայի տվյալները պետք է լրացնել՝ Ա բաժնում միայն աշնանացան ցորենի տվյալները, Բ բաժնում՝ գարնանացան կուլտուրաների տվյալները, իսկ Գ բաժնում՝ աշնանացան և գարնանացան կուլտուրաների ընդհանուր ցուցանիշները:

§ 46. Այն դեպքում, յեթե չափումը կատարվել է տվյալ կուլտուրայի վոչ ամբողջ տարածության վրա, ագրոտեխնիկայի վերաբերյալ տեղեկությունները պետք է վերաբերվեն միայն չափման յենթարկված տարածությանը:

ՅՈՒՅՄՈՒՆԻՏԵՐ Ա ԲԱԺՆԻ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

§ 47. Ա և Գ բաժիններում աշնանացան կուլտուրաների ագրոտեխնիկայի տվյալները պետք է վերաբերվեն գարնան տարածութուններին, այսպիսով 1 տողում գրված տարածութունը պետք է հավասար լինի հարցաթերթի առաջին յերեսի 3 կետում գրված տարածությանը:

§ 48. 2—10 տողերում գրվելու յե աշնանացանի այն տարածութունը, վորը ցանված է տարբեր յեղանակով մշակված հողամասերում. 2—5 տողերում՝ զանազան ցելերում ցանված տարածութունները, 6—10 տողերում՝ աշնանը մշակված հողամասերի վրա ցանված տարածութունները:

§ 49. 19-րդ տողում գրվելու յե մինչև գարնանացանի վերջըն ամբողջությամբ փչացած աշնանացան տարածութունները, համաձայն Պետապի կամ շրջանային հանձնաժողովի կազմած արձանագրություն:

§ 50. Այս բաժինը լրացնելուց հետո անհրաժեշտ է ստուգել՝ ա) 2, 3, 4, 5, 6, 7 և 9 տողերի գումարն անպայման հավասար պետք է լինի 1 տողին:

բ) 14 և 15 տողերի գումարը հավասար պետք է լինի կամ 1 տողին կամ 1 տողից պակաս; բայց վոչ յերբեք 1 տողից ավել:

ՅՈՒՅՄՈՒՆԻՏԵՐ Բ ԲԱԺՆԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԿՈՒՂՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

§ 51. 20 տողում գրված ամբողջ ցանքի տարածութունն անպայման հավասար պետք է լինի հարցաթերթի առաջին յերեսի 3 տողի տարածությանը:

§ 52. 21—26 տողերում գրվում են այն տարածութունները, վորոնք ցանված են տարբեր յեղանակով մշակված հողերում— 21—23՝ ցրտահերկի և ցելերի վրա, 24—26՝ գարնանավարի վրա:

§ 53. 27 տողում ցույց է տրվում թե աշնան հերկը վոր պմսի և վոր թվին է սկսվել ու վերջացել:

§ 54. 28 տողում գրվում է աշնանը հերկված հողամասի այն հիմնական մշակութունը, վորը կատարվել է գարնանացան կուլտուրայից առաջ: Յեթե կատարվել են մշակման զանազան յեղանակներ՝ աշնանավարի փոցխում, կրկնավար, պետք է ցույց

տալ միայն մշակման այն ձևը, վորը կատարվել է աշնանավարի տարածութեան մեծ մասի վրա:

§ 55. 35 տողում պետք է ցույց տալ թե փաստորեն քանի բանիւրական որումն է կատարվել ցանքը, դուրս գալով այն որերը, յերբ այս կամ այն պատճառով ցանք բոլորովին չի կատարվել:

§ 56. 36 և 37 տողերում գրվելու յե՛ թե քանի հեկտար է ցանված առաջին հնգորյակում (հաշված ցանքի առաջին որից) և ապա՝ յերկրորդ հնգորյակում: Այստեղ պետք է ինկատի ունենալ միայն մասսայական ցանքը:

§ 57. Բ. բաժինը լրացնելուց հետո պետք է ստուգել հետևյալը՝

ա) 21, 22, 23, 24, 25 և 26 տողերի գումարն անպայման հավասար պետք է լինի 20-րդ տողի թվին:

բ) 29, 36 և 37 տողերի գումարը կամ պետք է հավասար լինի 20 տողին, կամ նրանից պակաս, բայց վոչ յերբեք ավել 20-րդ տողից:

ՅՈՒՅՄՈՒՆԻՔՆԵՐ Գ ԲԱԺԻՒ ԱՇՆԱՆԱԳԱՆ ԶԵՎ ԳԱՐՆԱՆԱԳԱՆ ԿՈՒՂՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

§ 58. 46 տողում — տեսակավոր ցանքերին պետք է դասել միայն այն տարածութունները, վորոնք ցանված են այնպիսի սերմերով, վորոնց տեսակավոր լինելը ապացուցվում է փաստաթղթով: Յույց պետք է տալ նաև ցանված սերմի տեսակը, ըստ վորում յեթե ցանված է յերկու տեսակ, ապա պետք է գրել յուրաքանչյուրի անունը և նրանց տարածութուններն առանձին-առանձին:

§ 59. Գ բաժինը լրացնելուց հետո պետք է ստուգել հետևյալը՝

ա) Գարնանացանի համար՝ 29, 43, 45 տողերի գումարը պետք է հավասար լինի 20 տողին, աշնանացանի համար՝ 43 և 44 տողերի գումարը պետք է հավասար լինի 1-ին տողին:

բ) 48, 49 և 50 տողերի տվյալներն առանձին-առանձին կամ պետք է հավասար լինեն 41 տողին, կամ նրանից պակաս:

գ) 52, 53 և 54 տողերի գումարը պետք է հավասար լինի — աշնանացանի համար՝ 1-ին տողին, գարնանացանի համար՝ 20 տողին:

դ) 57, 58 և 59 տողերի գումարը պետք է հավասար լինի —

աշնանացանի համար՝ 1-ին տողին, գարնանացանի համար՝ 20 տողին.

§ 60. Ազրոտեխնիկայի բաժինը լրացնելու համար անպայման պետք է ոգտվել կոլտնտեսութեան աշնանացանի և գարնանացանի յեղրափակիչ հաշվետվութունից (աշնանացանի համար՝ ձև № 13—1934 թ., գարնանացանի համար՝ ձև № 5—1935 թ.):

Բ. ՅՈՒՅՄՈՒՆԻՔՆԵՐ ԺՏՀՎ ՇՐՋԱՆԱԳԻՆ ՏԵՍՉԻ ՀԱՄԱՐ

§ 61. ԺՏՀՎ շրջանային տեսուչը, նախքան աշխատանք սկսելը, լիազորին տալիս է անհրաժեշտ քանակութեամբ հարցաթերթերի ձևեր, վորոնցում առաջի յերեսի 1, 2, 3, 4, 5, 6 և 7 կետերն ինքը, տեսուչը նախորոք լրացրած պետք է լինի:

§ 62. 3-րդ կետում պետք է գրել ցանքի ընդհանուր տարածութունը, վորը ցույց է տված կոլտնտեսութեան գարնանացանի յեղրափակիչ հաշվետվութեան մեջ (ձև № 4-ում):

§ 63. Համաձայն սույն հրահանգի § 7-ի շրջանային տեսուչը, յեղնելով կոլտնտեսութեան չափվող կուլտուրայի ընդհանուր տարածութունից, վորոշում է նմուշներ (մետրովկաների) քանակը, վոր նա նշանակում է հարցաթերթի 7-րդ կետում (աշխատանքն սկսելուց առաջ):

§ 64. Յեղնելով վորոշված մետրովկաների քանակից, շրջանային տեսուչը սույն հրահանգի 23 յերեսի տախտակի ոգնութեամբ վորոշում է տվյալ կոլտնտեսութեան յուրաքանչյուր չափվող կուլտուրայի ինտերվալը և նշանակում հարցաթերթի 6-րդ կետում:

Ինտերվալը արվում է մետրերով:

§ 65. Յուրաքանչյուր կուլտուրայի չափումները վերջացնելուց հետո շրջանային տեսուչը լիազորներից անմիջապես ստանում է լրացրած հարցաթերթերը:

§ 66. Շրջանային տեսուչը լիազորից ստացած հարցաթերթերն ուշադրութեամբ պետք է ստուգման յենթարկի և հետևի, վորպեսզի հարցաթերթի բոլոր սյունակներն անպայման լրացրած լինեն հրահանգի ցուցմունքների համաձայն: Բոլոր հաշիվները պետք է կատարված լինեն ճիշտ և յեղած սխալները, բացերն ու թերութունները պետք է ստուգել լիազորների հետ միասին:

§ 67. Հարցաթերթի 18—23 կետերը լրացնելու յե ինքը՝ ԺՏՀՎ շրջանային տեսուչը, կոլտնտեսութեան տվյալ կուլտուրայի բերքի չափման աշխատանքները վերջանալուց հետո:

§ 68. 18 կետում պետք է գրել կոլտնտեսութան տվյալ կուլտուրայի բերքատվության մասին տեղեկություններ, վորպես սիք 1935 թ. ամռան ընթացքում կոլտնտեսութան վարչությունը հաղորդելիս է յեղել հողբաժնին, նույնպես և բերքատվության այն գնահատականը, վոր տվել է հողբաժնին կոլտնտեսութան նկատմամբ նույն ժամկետներին: Այս բաժինը պետք լրացնել բացառապես հողբաժնի նյութերի համաձայն և լրացնելիս վոչ մի ուղղում չպետք է թույլատրվի:

§ 69. Նմուշներն ստանալուն պես ժՏՀՎ շրջնային տեսուչը պետք է կազմակերպի հատիկի խոնավության $\%_0$ -ի և բնաքաշի վորոշման գործը: Այդ տվյալները պետք է նշվեն հարցաթերթի 19 և 20 կետերում: Յեթե այդ տվյալների վորոշումը մեկ որից ավել է ուշանում, այն ժամանակ հարցաթերթը պետք է ուղարկել առանց լրացնելու 19 և 20 կետերը, իսկ հետագայում բոլոր նմուշների հատիկի խոնավության $\%_0$ -ն ու բնաքաշը պետք ուղարկել լրացուցիչ կերպով, հետևյալ ձևով.

Տեղեկություններ 1935 թ. արմատի վրա բերքի չափը վորոշելիս հասիկի խոնավության յնվ բնաքաշի մասին
Շրջան կուլտուրայի անունը

Կոլտնտեսութայն անունը	խոնավության $\%_0$ -ը	Բնաքաշը

§ 70. Շրջանային տեսուչը 21 կետում պետք է նշանակի թե քանիք անգամ և յե՞րբ է ստուգել լիազորի աշխատանքները տեղում:

§ 71. Տեսուչը 22 կետում ցույց է տալու թե ինչ բացեր է հայտարարել նա աշխատանքներն ստուգելու ժամանակ:

§ 72. 23 կետում տեսուչը պետք է տա լիազորի աշխատանքի գնահատականը: Իրանից հետո նա որպարում է հարցաթերթը:

Աղյուսակ, վորով վորոշվում է մետրովկաների միջև թողնել-վող տարածությունները—ինտերվալները (մետրերով)

Աղյուսակ 1

Միջեկ 30 հեկտար ցանքի տարածության համար

	Յեթե կոլտնտեսութայն չափից կուլտուրայի տարածությունը կազմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Ինտերվալ պիտի սահմանել		
		200 մետրովկայի համար (մետրերով)	300 մետրովկայի համար (մետրերով)	200 մետրովկայի համար (մետրերով)	300 մետրովկայի համար (մետրերով)	
Միջև	5	14	11	18	30	25
»	5	16	13	19	31	25
»	6	17	14	20	32	26
»	7	18	15	21	33	27
»	8	20	16	22	33	27
»	9	21	17	23	34	28
»	10	23	19	24	35	29
»	11	23	19	25	35	29
»	12	25	20	26	36	29
»	13	25	20	27	37	30
»	14	26	21	28	37	30
»	15	27	23	29	38	31
»	16	28	23	30	39	32
»	17	29	24			

30-ից մինչև 100 հեկտար սարածուրյան համար

Յեթն կողմանոստեղյան չափվող կուլտուրայի տարածությունը կաղ- մում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Յեթն կողմանոստեղյան չափվող կուլտուրայի տարածությունը կաղմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել	
	300 մետրովկա- մի համար (մետրերով)	400 մետրովկա- մի համար (մետրերով)		300 մետրովկա- մի համար (մետրերով)	400 մետրովկա- մի համար (մետրերով)
31	32	28	62-63	46	40
» 32	33	28	64-66	47	40
» 33-34	33	29	67-68	47	41
» 35-36	34	30	69-70	48	42
» 37	35	30	71-73	49	43
» 38-39	36	31	74-75	50	43
» 40-41	37	32	76-78	51	43
» 42-43	38	32	79-80	51	44
» 44-45	38	33	81-83	52	45
» 46-47	39	34	84-85	53	46
» 48-49	40	35	86-88	54	47
» 50-51	41	36	89-91	55	47
» 52-53	42	36	92-93	56	48
» 54-55	42	37	94-96	56	49
» 56-57	43	37	97-99	57	50
» 58-59	44	38	100	58	51
» 60-61	45	39			

100 հեկտարից ավելի ցանքի սարածուրյան համար

Յեթն կողմանոստեղյան չափվող կուլտուրայի տարածությունը կաղ- մում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Յեթն կողմանոստեղյան չափվող կուլտուրայի տարածությունը կաղ- մում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել	
	400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար (մետրերով)		400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար (մետրերով)
101-104	51	45	220-224	74	67
105-107	51	46	225-229	75	67
108-110	52	46	230-234	76	68
111-113	52	47	235-239	77	69
114-117	54	48	240-244	77	69
118-120	55	49	245-249	78	70
121-124	55	50	250-254	79	70
125-129	56	50	255-259	80	71
130-134	57	51	260-264	81	72
135-139	58	52	265-269	81	73
140-144	59	53	270-274	82	74
145-149	60	53	275-279	83	74
150-154	61	54	280-284	84	75
155-159	62	56	285-289	84	76
160-164	63	57	290-294	85	77
165-169	64	57	295-299	86	77
170-174	65	58	300-309	87	77
175-179	66	60	310-314	83	78
180-184	67	60	315-319	89	79
185-189	68	61	320-324	89	80
190-194	69	61	325-329	90	81
195-199	70	62	330-334	91	81
200-204	70	63	335-339	92	82
205-209	71	64	340-349	92	83
210-214	73	65	350-354	93	84
215-219	74	66	355-359	94	84

Աղ. 3-ի շարունակութիւն

Յեթն կողմնատեսութեան չափով կուլտուրայի տարածութեանը կազմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Յեթն կողմնատեսութեան չափով կուլտուրայի տարածութեանը կազմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել	
	400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար (մետրերով)		400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար՝ մետրերով
	360—364	95		85	545—554
365—369	96	85	555—559	118	106
370—379	96	86	560—569	119	106
380—384	97	87	570—574	120	107
385—389	98	88	575—584	120	107
390—394	99	88	585—594	121	108
395—404	100	89	595—604	122	109
405—409	100	90	605—614	123	110
410—414	101	91	615—619	124	111
415—419	102	92	620—629	124	112
420—429	103	92	630—634	125	113
430—434	104	93	635—644	126	113
435—439	104	93	645—654	127	114
440—449	105	94	655—664	128	114
450—454	106	95	665—674	129	115
455—459	107	95	675—679	130	116
460—469	108	96	680—689	131	117
470—474	108	97	690—699	132	118
475—484	109	98	700—709	133	119
485—489	110	98	710—719	133	119
490—494	111	99	720—729	134	120
495—500	111	100	730—739	135	121
501—509	112	100	740—749	136	122
510—514	113	101	750—759	137	123
515—519	113	101	760—769	138	123
520—529	114	102	770—779	139	124
530—539	115	103	780—789	139	124
540—544	116	104	790—799	140	125

Յեթն կողմնատեսութեան չափով կուլտուրայի տարածութեանը կազմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Յեթն կողմնատեսութեան չափով կուլտուրայի տարածութեանը կազմում է (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել	
	400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար (մետրերով)		400 մետրով- կայի համար (մետրերով)	500 մետրով- կայի համար՝ մետրերով
	800—809	141		126	1100—1109
810—819	142	127	1110—1119	167	149
820—829	143	128	1120—1139	168	150
830—839	144	129	1140—1149	169	151
840—849	145	130	1150—1169	170	151
850—859	145	130	1170—1179	171	153
860—869	146	131	1180—1199	172	154
870—879	147	131	1200—1209	173	155
880—889	148	132	1210—1219	174	156
890—899	149	133	1220—1239	175	157
900—909	150	135	1240—1249	176	157
910—919	151	135	1250—1269	177	158
920—929	152	136	1270—1279	178	159
930—939	152	136	1280—1289	179	160
940—949	153	137	1290—1309	180	161
950—959	154	138	1310—1319	181	162
960—969	155	139	1320—1339	182	163
970—979	156	140	1340—1349	183	164
980—989	157	140	1350—1369	184	165
990—1000	158	141	1370—1379	185	165
1001—1009	158	141	1380—1399	186	166
1010—1019	159	142	1400—1409	187	167
1020—1039	160	143	1410—1429	188	168
1040—1049	161	144	1430—1439	189	169
1050—1059	162	145	1440—1459	190	170
1060—1069	163	146	1460—1469	191	171
1070—1089	164	147	1470—1489	192	172
1090—1099	165	148	1490—1499	193	173

Աղ. 3-ի շարունակութիւն

Յեթն կողմանոցից յան շարժող կողմերէն տարածութիւնը կազ- մում և (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել		Յեթն կողմանոցից յան շարժող կողմերէն տարածութիւնը կազ- մում և (հեկտարներով)	Ինտերվալ պիտի սահմանել	
	400 մետրով-	500 մետրով-		400 մետրով-	500 մետրով-
	կայի համար (մետրերով)	կայի համար (մետրերով)		կայի համար (մետրերով)	կայի համար՝ մետրերով
1500—1519	194	174	1740—1749	209	187
1520—1529	195	174	1750—1779	210	188
1530—1549	196	175	1780—1789	211	189
1550—1569	197	176	1810—1829	213	191
1570—1579	198	177	1830—1849	214	191
1580—1599	199	178	1850—1859	215	192
1600—1609	200	179	1860—1879	216	193
1610—1629	201	180	1880—1899	217	194
1630—1649	202	181	1900—1909	218	195
1650—1659	203	182	1910—1929	219	196
1660—1679	204	182	1930—1949	220	197
1680—1689	205	183	1950—1969	221	198
1690—1709	206	184	1970—1989	222	199
1710—1729	207	185	1990—2000	223	199
1730—1739	208	186			

Պատ. խմբագիր՝ Ս. Յերկանյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Պրակտիկա № 7—110, հրատ № 232, պատվեր № 398, տիրած 500
Հանձնվել և արտագրութիւն 8/VI 35 թ, ստորագրված և ապագրելու 14/VI 35 թ.
Պրոզերատի տպարան, Յերեան, Նալբանդյան № 11

«Ազգային գրադարան»



NL0280476

18415

М.

3-4264

ЗГТ



ИНСТРУКЦИЯ

По измерению урожая на корню
зерновых культур в 1935 году

А. 1935г.

Акт № 143

Вкладн л. _____